ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «04» հուլիսի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 292-Ա

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՀԱՅՏԱՏՈՒ՝ ՎԱՂԻՆԱԿ ԷՄԻԼԻ ԱՆԱՆՅԱՆԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2023 թվականի հունիսի 20-ին կայացած ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության (այսուհետ՝ Որակավորում) ընթացքում առաջադրված հարցաթերթում առկա սխալների հիմքով հայտատու Վաղինակ Էմիլի Անանյանի կողմից 2023 թվականի հունիսի 26-ին ներկայացված դիմում-բողոքը և բողոքի հիման վրա Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի N 285-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2023 թվականի հուլիսի 3-ի N 1 արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի պահանջների համաձայն՝ Որակավորման քննության արդյունքները կարող են գրավոր բողոքարկվել հայտատուի կողմից՝ որակավորման քննության առաջադրանքի որևէ հարցի կամ դրա պատասխանի ճշտության (իր արդյունքների մասով) և ընթացակարգային խախտումների մասով: Գրավոր բողոքը

քննության է առնվում վերադասության կարգով՝ կոմիտեի ղեկավարի կողմից: Գրավոր բողոքը պետք է տրվի որակավորման քննության արդյունքները հրապարակվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ կոմիտեի իրավասու ստորաբաժանմանը, որն այն ստանալուց հետո անմիջապես ներկայացնում է կոմիտեի ղեկավարին:

Միաժամանակ Կարգի 47-րդ կետի պահանջների համաձայն բողոքարկման արդյունքում կոմիտեի ղեկավարը, աշխատանքային խմբի եզրակացության հիման վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքն անփոփոխ թողնելու մասին.

2) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը փոփոխելու վերաբերյալ.

3) բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետներով երկարաձգելու մասին:

Ըստ 2023 թվականի հուլիսի 3-ի N 1 արձանագրության հայտատու Վաղինակ Էմիլի Անանյանը 2023 թվականի հունիսի 20-ի որակավորման քննության արդյունքները հրապարակվելուց հետո բողոքարկել է իր կողմից լրացված հարցաշարի 25-րդ, 35-րդ խնդիրները և 57-րդ հարցը, նշելով, որ 25-րդ հարցի պարագայում առաջնորդվել է այն սկզբունքով, որ խնդրի լուծման արդյունքում պետք է ստանար 5,66 % , սակայն ներկայացված հավանական պատասխաններում բացակայել է նշված ցուցանիշը, ուստի ընտրել է ցանկացած պատասխան հետագայում բողոքարկելու համար: Իսկ 35-րդ խնդրի մասով՝ հաշվարկել է փոխարինման արժեքը, քանի որ ըստ իր պնդման խնդրի պահանջը հստակ չի եղել: Միաժամանակ հայտատուն հրաժարվել է անդրադառնալ դիմում բողոքով նշված 57-րդ հարցի քննարկմանը, ընդունելով, որ հարցի պատասխանը իր կողմից սխալ է ընտրվել:

Ուստի Աշխատանքային խմբի ուսումնասիրությամբ պարզվեց, որ հարցաթերթի 25-րդ և 35-րդ խնդիրները ձևակերպված են ճիշտ, ինչպես նաև

խնդիրներին ներկայացված հավանական պատասխաններում առկա են ճիշտ տարբերակները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի 47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի N 285-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2023 թվականի հուլիսի 3-ի N 1 արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման 2023 թվականի հունիսի 20-ի քննության հայտատու Վաղինակ Էմիլի Անանյանի որակավորման ստուգման արդյունքը թողնել անփոփոխ (միավորների քանակը՝ 118-ը):

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

04.07.2023

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393